2013 թվականի հուլիսի 13 -ին ժամը 14 ^{00} –ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի անդամների ընդհանուր ժողով

Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզի Տեղական ինքնակառավարման համայնքային ծառայության հարցերով բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանը: Համայնքի անդամներից ներկա էին 40 բնակիչներ, դպրոցի տնօրենը, գյուղապետարանի աշխատակիցներ և ավագանու անդամների 7-ից 5-ը:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2013 թվականի I կիսամյակում կատարած աշխատանքների մասին

Զեկ. Համայնքի ղեկավար՝
Մ.Մկրտչյան

Հարգելի Ծաղկալանջ համայնքի բնակիչներ, հյուրեր.
Ձեզ եմ ներկայացնում 2013 թվականի I կիսամյակի ընթացքում գյուղապետարանի և ավագանու կողմից կատարած աշխատանքների հաշվետվությունը:

2013 թվականի I կիսամյակի ընթացքում գյուղապետարանը և ավագանին իր գործունեությունը իրականացրել է 2013 թվականին կազմած աշխատանքային ծրագրին համապատասխան՝ ըստ բնագավառների: Բարելավել ենք հանդամիջյան ճանապարհները, ամիսը 4 անգամ կատարվել է աղբաթափություն, որի համար հատկացվել է 483.000 դրամ գումար:

Համայնքի 12, 13 և 16-րդ փողոցներում կատարվել է խճապատում, որի համար նախատեսվել է 950.0 հազար դրամ:

Ջրամատակարարման նպատակով կատարվել է ջրաչափերի տեղադրման աշխատանքներ՝ շուրջ 60 հատ, մյուս մասը նախատեսվում է տեղադրել մինչև տարեվերջ:

Կազմակերպվել և հաշվետվություններ են ներկայացվել վիճակագրական ծառայությանը անասնագլխաքանակի, բնակչության սեռատարիքային շարժի, բերքահավաքի և գարնանացանի տվյալների մասին: Եկամուտների, ծախսերի և աշխատավարձի մասին հաշվետվություններ են ներկայացվել Արմավիրի մարզպետարան, եռամսակային հաշվետվություններ են ներկայացվել հարկային տեսչություն: Կադաստրի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել շենքերի և շինությունների կառուցման և քանդման շարժի մասին:

Համայնքի դպրոցի և գյուղի երիտասարդության հետ համատեղ կազմակերպվել է երիտասարդական միջոցառում նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, որի համար 350.000 դրամ է հատկացվել: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 68 ամյակին և Շուշիի ազատագրման 21 ամյակին ,որի համար 400.000 դրամ է հատկացվել: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված դպրոցի շրջանավարտների վերջին զանգին,հատկացվել է 50.000 դրամ:

2013 թվականի I կիսամյակի ընթացքում ստացվել և պատասխանվել է 25 գրություն: Կայացել է ավագանու 5 նիստ և քննարկվել է 13 հարց, ընդունվել է համապատասխան որոշումներ:

Համայնքն ունի 28 նպաստառու ընտանիքներ: Սոցիալապես անապահով ընտանիքներին իրենց դիմումների և ավագանու որոշմամբ տրվել է դրամական օգնություններ՝ 370.000 դրամ:

2013 թվականի I կիսամյակի ընթացքում համայնքում ծնվել է 13 երեխա, արձանագրվել է 8 մահ, ամուսնացողների թիվը հասնում է 6-ի:

Ընդունվել է գյուղապետի 10 որոշում, ընդունվել է 25 դիմում, որոնք բոլորն էլ ստացել են համապատասխան լուծումներ: Համայնքի բնակչությանը տրվել է համապատասխան ոլորտի 181 տեղեկանքներ:

2013 թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտի հասցրած վնասների պատճառով հողի հարկի և վարձակալական հողի վարձավճարների գանձումները բնակչության անվճարունակ լինելու պատճառով թերի է կատարվել:

Գյուղապետարանը աշխատավարձի պարտք չունի:

Գյուղում կան մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ կցանկանայի տեղեկացնել Ձեզ և մարզպետարանի ներկայացուցչին, քանզի նշված խնդիրները գյուղապետարանի միջոցներով հնարավոր չէ իրականացնել.

1. Մշակույթի տունը վերակառուցման և վերանորոգման անհրաժեշտություն ունի, բնակչությունը մշակութային միջոցառումներ չեն կարող կատարել, անգամ իր ազատ ժամանակը սովորական խաղերով անցկացնելու վայր չունի
2. Չի գործում մանկապարտեզը՝ համապատասխան շենքային պայմանների բացակայության պատճառով, նախկին շենքը կարիք ունի վերանորոգման:
3. Ներտնտեսային ոռոգման ցանցը գրեթե ամբողջությամբ հողային հունով է, կորուստը մեծ է և այն հանգեցնում է գերծախսի ջրօգտագործողների արդարացի դժգոհությանը:

4. Խմելու ջրի ներքին ցանցը նույնպես անմխիթար վիճակում է ,որը վերանորոգման կարիք ունի:

Գյուղում կատարվող բոլոր երևույթները գյուղապետարանի ուշադրության կենտրոնից դուրս չեն մնում, կա սերտ կապվածություն գյուղացու և գյուղապետարանի միջև: Սիրելի համագյուղացիներ Ձեր բոլոր գրավոր և բանավոր դիմումները և խնդրանքները քննարկվում են և հնարավորության սահմաններում տրվում են համապատասխան լուծումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Մ. ՄԿՐՏՉՅԱՆ*